**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/72-1**

ք. Երևան «14» մայիսի 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինհայ-ՊՌ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***Դավթաշեն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման*** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համաձայն հավելված 2-ի:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով

ճանաչված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրությունը չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **38767445(երեսունութ միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր քառասունհինգ)** ՀՀ դրամ, որից **6461241(վեց միլիոն չորս հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր քառասունմեկ)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,19 (զրո ամբողջ տասնինն հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կապալառու**
«Ծինհայ-ՊՈ» ՍՊԸ
ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 14 » մայիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1>> գնման պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Դավիթաշեն վարչական շրջան 4-րդ թաղամասի h. 15 շենքի բակի բարեկարգում

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը /հազ դրամ/ | Ընդամենը /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Քանդման աշխատանքներ | | | | |
| 1 | Հենապատերի քանդում | $մ^3$ | 28.70 | 15.325 | 439.828 |
| 2 | Մետաղական ցանցի ապամոնտաժում 2մ բարձրությամբ | գմ | 115.0 | 0.372 | 42.780 |
| 3 | Մետաղական տնակի ապամոնտաժում | տն | 2.20 | 34.217 | 75.277 |
| 4 | Քարե տնակի քանդում h=1,5մ | $մ^3$ | 3.0 | 3.507 | 10.521 |
| 5 | Նստարանների ապամոնտաժում | հատ | 2.0 | 2.283 | 4.566 |
| 6 | Սևահողի հանում (2-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով) | $մ^3$ | 130.0 | 1.178 | 153.140 |
| 7 | Բետոնե աստիճանների քանդում | $մ^3$ | 1.80 | 13.097 | 23.575 |
| 8 | Շին աղբի և սևահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 223.20 | 2.783 | 621.166 |
| | | | | | |
| | Շին վերանորոգման աշխատանքներ | | | | |
| 9 | Խճի նախապատրաստական շերտի պատրաստում | $մ^3$ | 3.912 | 10.616 | 41.530 |
| 10 | Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 150x300մմ | գմ | 195.60 | 4.962 | 970.567 |
| 11 | Խճի նախապատրաստական շերտի պատրաստում | $մ^3$ | 8.864 | 10.616 | 94.100 |
| 12 | Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x200մմ | գմ | 443.20 | 4.437 | 1966.478 |
| 13 | Կանաչ գորգածածկույթ | $մ^2$ | 57.0 | 3.383 | 192.831 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14 | Ասֆալտաբետոնե ծածկույթի կտրում | գմ | 24.0 | 0.318 | 7.632 |
| 15 | Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ | $մ^2$ | 96.30 | 1.132 | 109.012 |
| 16 | Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ | $մ^2$ | 96.30 | 4.340 | 417.942 |
| 17 | Միաձույլ ե/բետոնե աստիճանների պատրաստում B-15 դասի բետոնից | $մ^3$ | 11.0 | 36.947 | 406.417 |
| 18 | Ամրանի արժեքը Φ10 A500c դասի | տն | 0.110 | 340.637 | 37.470 |
| 19 | Պատերի ց/ավազե սվաղ | $մ^2$ | 80.0 | 1.723 | 137.840 |
| 20 | Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա | $մ^3$ | 193.20 | 1.978 | 382.150 |
| 21 | Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից | տն | 231.840 | 4.779 | 1107.963 |
| 22 | Բուսահողի փռում ձեռքով | $մ^2$ | 966.0 | 0.289 | 279.174 |
| 23 | Սիզամարգերի տեղադրում | $մ^2$ | 966.0 | 0.143 | 138.138 |
| 24 | Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/ | $մ^3$ | 14.815 | 10.616 | 157.276 |
| 25 | Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ | $մ^3$ | 14.815 | 10.773 | 159.602 |
| 26 | Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում 50մմ հաստությամբ | $մ^2$ | 296.30 | 4.610 | 1365.943 |
| 27 | B-15 դասի բետոնից հենապատերի պատրաստում | $մ^3$ | 24.000 | 37.889 | 909.336 |
| 28 | Մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում 50x40x2,5մմ մետաղական խողովակներից | տն | 0.059 | 62.461 | 3.654 |
| 29 | 50x40x2,5մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 18.0 | 1.285 | 23.130 |
| 30 | Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում | տն | 0.059 | 29.142 | 1.705 |
| *31 | Նստարանների տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը ամրացումով | հատ | 24.0 | 4.413 | 105.912 |
| *32 | Աղբամանների տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը ամրացումով | հատ | 19.0 | 2.206 | 41.914 |
| *33 | Մարզասարքերի տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը ամրացումով | հատ | 6.0 | 6.252 | 37.512 |
| *34 | Մանկական խաղերի տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը ամրացումով | հատ | 4.0 | 6.252 | 25.008 |
| | | | | | |
| | **Մետաղական ցանկապատ H=0,7մ 230,6գմ** | | | | |
| 35 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 16.780 | 3.241 | 54.384 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 36 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 3.020 | 0.727 | 2.196 |
| 37 | Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 26.143 | 2.783 | 72.757 |
| 38 | Խճի շերտի պատրաստում | $մ^3$ | 1.175 | 10.616 | 12.470 |
| 39 | Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-12,5 դասի բետոնից | $մ^3$ | 12.585 | 42.450 | 534.233 |
| 40 | Ամրանի արժեքը D10մմ A500c դասի | տն | 0.223 | 340.637 | 75.824 |
| 41 | Թերթապողպատի տեղադրում 100x100x8մմ, | տն | 0.0527 | 505.303 | 26.624 |
| 42 | Մետաղական ցանկապատի պատրաստում մետաղական էլեմենտներից | տն | 2.809 | 114.634 | 322.000 |
| 43 | 76x3,5մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 125.85 | 2.497 | 314.247 |
| 44 | Ամրան D6մմ A500c դասի | տն | 0.127 | 343.261 | 43.476 |
| 45 | 40x40x3մմ մետաղական անկյունակի արժեքը | գմ | 570.52 | 0.752 | 429.031 |
| 46 | Ամրանային ցանց 30x30x1,8մմ | տն | 0.84 | 431.445 | 361.982 |
| 47 | Մետաղական մասերի 2շերտ ներկում | $մ^2$ | 310.430 | 0.952 | 295.529 |
| | | | | | |
| | Էլեկտրալուսավորություն /3հատ/ H=6մ | | | | |
| 48 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 1.50 | 3.241 | 4.862 |
| 49 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 1.110 | 0.727 | 0.807 |
| 50 | Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 0.722 | 2.783 | 2.008 |
| 51 | Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից | $մ^3$ | 0.390 | 42.041 | 16.396 |
| 52 | 133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ | տն | 0.031 | 74.585 | 2.279 |
| 53 | 133x4մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 2.40 | 5.122 | 12.293 |
| 54 | Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում | հատ | 3.0 | 11.523 | 34.569 |
| 55 | 102x4մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 20.40 | 3.781 | 77.132 |
| 56 | 32x3մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 3.0 | 0.865 | 2.595 |
| 57 | Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում | տն | 0.204 | 29.142 | 5.937 |
| 58 | Լուսատուների տեղադրում /LED | հատ | 3.0 | 15.421 | 46.263 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 59 | Մեկուսիչ ՏՖ-20 | հատ | 3.0 | 0.524 | 1.572 |
| 60 | Մեկուսիչ ՛Ընկույզ՛ | հատ | 3.0 | 0.734 | 2.202 |
| 61 | Բաժանարար մետաղական տուփիկ | հատ | 3.0 | 1.574 | 4.722 |
| 62 | АВВГ 4x16մմ2մալուխի անցկացում /ստորգետնյա/ | գմ | 400.0 | 0.747 | 298.800 |
| | | | | | |
| | **Ոռոգման ցանց** | | | | |
| 63 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 26.0 | 3.241 | 84.266 |
| 64 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 18.0 | 0.727 | 13.086 |
| 65 | Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 14.80 | 2.783 | 41.188 |
| 66 | Ավազե նախապատրաստական շերտ պատրաստում | $մ^3$ | 7.50 | 3.716 | 27.870 |
| 67 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում խողովակաշարի վրա | $մ^3$ | 15.0 | 3.036 | 45.540 |
| 68 | Պողպատե խողովակի տեղադրում Ф57x3մմ փորձարկումով | գմ | 198.20 | 1.906 | 377.769 |
| 69 | Պողպատե ձեւավոր մասերի տեղադրում | տ | 0.184 | 1191.336 | 219.206 |
| 70 | Ոռոգման ծորակների տեղադրում Ф50մմ | հատ | 7.0 | 6.516 | 45.612 |
| 71 | Մետաղական մասերի 2շերտ ներկում | $մ^2$ | 42.0 | 0.920 | 38.640 |
| 72 | Ցնցուղների տեղադրում | հատ | 31.0 | 2.213 | 68.603 |
| | | | | | |
| | **Ընդամենը** | | | | **14510.058** |
| | **Շահույթ** | **11%** | | | 1596.106 |
| | **Ընդամենը** | | | | **16106.164** |
| | **Սարքավորումներ** | | | | **1349.261** |
| | Նստարան | հատ | 24 | 28.306 | 679.344 |
| | Աղբաման | հատ | 19 | 14.153 | 268.907 |
| | Մարզասարք | հատ | 6 | 40.101 | 240.606 |
| | Մանկական խաղ | հատ | 4 | 40.101 | 160.404 |
| | **ԱԱՀ** | **20%** | | | **3491.085** |
| | **Ընդամենը** | | | | **20946.510** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17 | Պատերի ց/ավազե սվաղ ցանցով | մ$^2$ | 90.0 | 1.709 | 153.810 |
| 18 | Ամրանային ցանցի տեղադրում 4Br | տն | 0.260 | 444.293 | 115.516 |
| 19 | Խարիսխ Ф16A 500c | տն | 0.692 | 354.623 | 245.399 |
| 20 | Խճի շերտի պատրաստում 10սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/ | մ$^3$ | 17.0 | 10.720 | 182.240 |
| 21 | B-15 դասի բետոնից նախապատրաստական շերտ 5սմ հաստությամբ | մ$^3$ | 8.50 | 30.781 | 261.639 |
| 22 | Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ | մ$^3$ | 8.50 | 10.729 | 91.197 |
| 23 | Բետոնե զեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում | մ$^2$ | 170.0 | 4.617 | 784.890 |
| *24 | Նստարանների տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը ամրացումով | հատ | 9.0 | 4.400 | 39.600 |
| *25 | Աբղամանների տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը ամրացումով | հատ | 8.0 | 2.200 | 17.600 |
| 26 | Ավազի շերտի փռում /լվացած/ 87մ2 | մ$^3$ | 8.70 | 4.094 | 35.618 |
| | | | | | |
| | **Ոռոգման ցանց** | | | | |
| 27 | Ավազե նախապատրաստական շերտ պատրաստում | մ$^3$ | 3.50 | 3.692 | 12.922 |
| 28 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում խողովակաշարի վրա | մ$^3$ | 7.0 | 3.020 | 21.140 |
| 29 | Պողպատե խողովակի տեղադրում Ф51x3մմ փորձարկումով | գմ | 140.0 | 1.768 | 247.520 |
| 30 | Պողպատե խողովակի տեղադրում Ф25x3մմ փորձարկումով | գմ | 90.0 | 1.025 | 92.250 |
| 31 | Ոռոգման ծորակների տեղադրում Ф50մմ | հատ | 18.0 | 6.495 | 116.910 |
| 32 | Ցնցուղների տեղադրում | հատ | 42.0 | 2.205 | 92.610 |
| 33 | Պողպատե ձևավոր մասերի տեղադրում | տ | 0.280 | 1209.808 | 338.746 |
| 34 | Ոռոգման ծորակների տեղադրում Ф50մմ | հատ | 1.0 | 6.495 | 6.495 |
| 35 | Մետաղական մասերի 2շերտ ներկում | մ$^2$ | 30.0 | 0.911 | 27.330 |
| | | | | | |
| | **Էլեկտրալուսավորություն /5հատ/ H=6մ** | | | | |
| 36 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ$^3$ | 2.50 | 3.202 | 8.005 |
| 37 | Բնահողի ետլիցք ձեռքով | մ$^3$ | 1.50 | 0.718 | 1.077 |
| 38 | Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 1.850 | 2.906 | 5.376 |

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Դավիթաշեն վարչական շրջան Դավիթաշեն գյուղ 4-րդ փողոցի վերջնամասի բարեկարգում

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | միավորի արժեքը /հազ դրամ/ | ընդամենը /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Քանդման աշխատանքներ** | | | | |
| 1 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 47.0 | 1.718 | 80.746 |
| 2 | Պատերի քանդում | $մ^3$ | 5.0 | 10.031 | 50.155 |
| 3 | Սվաղի քերում | $մ^2$ | 90.0 | 0.145 | 13.050 |
| 4 | Շին աղբի և բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 10.537 | 2.906 | 30.620 |
| | | | | | |
| | **Շին վերանորոգման աշխատանքներ** | | | | |
| 5 | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ա/ինքնաթափերի վրա | $մ^3$ | 100.0 | 0.549 | 54.900 |
| 6 | Ավելնորդ բնահողի տեղափոխում 13կ-ից | տն | 185.0 | 2.281 | 421.985 |
| 7 | Բնահողի հետ լիցք բուլդոզերով, տեղափոխելով 10մ | $մ^3$ | 100.0 | 0.080 | 8.000 |
| 8 | B-15 դասի բետոնից հենապատերի պատրաստում | $մ^3$ | 12.0 | 37.978 | 455.736 |
| 9 | Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 150x300մմ | գմ | 300.0 | 4.951 | 1485.300 |
| 10 | Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 800x200մմ | գմ | 21.0 | 4.427 | 92.967 |
| 11 | Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ | $մ^2$ | 130.0 | 1.138 | 147.940 |
| 12 | Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ | $մ^2$ | 130.0 | 4.325 | 562.250 |
| 13 | Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա | $մ^3$ | 66.0 | 1.997 | 131.802 |
| 14 | Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից | տն | 79.20 | 5.070 | 401.544 |
| 15 | Բուսահողի փռում ձեռքով | $մ^2$ | 330.0 | 0.285 | 94.050 |
| 16 | Սիզամարգերի տեղադրում | $մ^2$ | 330.0 | 0.142 | 46.860 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 39 | Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից | $մ^3$ | 1.0 | 41.939 | 41.939 |
| 40 | 133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ | տն | 0.051 | 76.265 | 3.883 |
| 41 | 133x4մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 4.0 | 5.107 | 20.428 |
| 42 | Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում | հատ | 5.0 | 11.810 | 59.050 |
| 43 | 102x4մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 34.0 | 3.770 | 128.180 |
| 44 | 32x3մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 5.0 | 0.863 | 4.315 |
| 45 | Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում | տն | 0.340 | 29.012 | 9.850 |
| 46 | Լուսատու լուսադիոդային | հատ | 5.0 | 15.456 | 77.280 |
| 47 | АВВГ 2x2.5մմ2 մալուխի անցկացում | գմ | 40.0 | 0.196 | 7.840 |
| 48 | Անջատիչ ՏՖ-20 | հատ | 5.0 | 0.523 | 2.615 |
| 49 | Անջատիչ՝Ընկույզ՝ | հատ | 5.0 | 0.732 | 3.660 |
| 50 | Բաժանարար մետաղական տուփիկ | հատ | 5.0 | 1.569 | 7.845 |
| 51 | АВВГ 4x16մմ2 մալուխի անցկացում խրամուղով գոֆրե խողովակով | գմ | 100.0 | 0.756 | 75.600 |
| 52 | Գոֆրե խողովակի անցկացում խրամուղով D32մմ | գմ | 100.0 | 0.420 | 42.000 |
| | | | | | |
| | **Տաղավարների պատրաստում և տեղադրում /3x2.5/մ 1հատ** | | | | |
| 53 | Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից | $մ^3$ | 0.350 | 44.308 | 15.508 |
| 54 | Ամրանի արժեքը A500c դասի | տն | 0.080 | 340.514 | 27.241 |
| 55 | Ջրուցատաղավարի պատրաստում /կանգնակներ 100x100x3մմ մետ խողովակներից, հեծաններ 100x100x3մմ, տանիքային մաս 80x80x2մմ, կավարամած 30x30x1.5մմ, բազրիքաձողեր 30x30x1.5մմ/ | տն | 0.380 | 62.563 | 23.774 |
| 56 | 100x100x3մմ մետ խողովակների արժեքը | գմ | 22.20 | 3.566 | 79.165 |
| 57 | 80x80x2մմ մետ խողովակների արժեքը | գմ | 21.40 | 1.875 | 40.125 |
| 58 | 30x30x1.5մմ մետ խողովակների արժեքը | գմ | 58.0 | 0.575 | 33.350 |
| 59 | Պրոֆ /գունավոր/ թիթեղի ծածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ КП-21-0.5մմ | $մ^2$ | 14.0 | 4.992 | 69.888 |
| *60 | Մետաղական նստարան փայտե նստատեղերով տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը ամրացումով | հատ | 2.0 | 4.400 | 8.800 |
| 61 | Ջրուցատաղավարի մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում | $մ^2$ | 27.0 | 0.944 | 25.488 |
| | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մետաղական բազրիք L=90գմ | | | | |
| 62 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 3.571 | 3.202 | 11.434 |
| 63 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 2.50 | 0.718 | 1.795 |
| 64 | Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 2.035 | 2.906 | 5.915 |
| 65 | Խճի շերտի պատրաստում | $մ^3$ | 0.50 | 10.720 | 5.359 |
| 66 | Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից | $մ^3$ | 0.571 | 41.939 | 23.962 |
| 67 | Թերթապողպատի տեղադրում 80x80x6մմ, | տն | 0.0108 | 505.722 | 5.444 |
| 68 | 40x40x2մմ, 30x60x2մմ, 20x20x2մմ մետաղական խողովակներից բազրիքների պատրաստում և տեղադրում | գմ | 50.0 | 1.887 | 94.350 |
| 69 | 40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 46.42 | 0.877 | 40.713 |
| 70 | 30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 99.99 | 1.005 | 100.488 |
| 71 | 20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 178.55 | 0.433 | 77.312 |
| 72 | Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում | տն | 0.565 | 29.012 | 16.394 |
| | | | | | |
| | Հենապատ | | | | |
| 73 | Խճի շերտի պատրաստում | $մ^3$ | 7.60 | 10.720 | 81.472 |
| 74 | Միաձույլ ե/բ հենապատերի պատրաստում B-20 դասի բետոնից | $մ^3$ | 78.30 | 48.505 | 3797.942 |
| 75 | Ամրանի արժեքը ф12մմ A500c դասի | տն | 2.347 | 329.396 | 773.059 |
| 76 | Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի | տն | 0.072 | 331.648 | 23.879 |
| 77 | Պատերի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով | $մ^2$ | 184.0 | 0.704 | 129.536 |
| 78 | Դրենաժային խողովակ D100մմ | գմ | 23.0 | 1.087 | 25.001 |
| | | | | | |
| | **Ընդամենը** | | | | **12997.675** |
| | **Շահույթ** | **11%** | | | 1429.744 |
| | **Ընդամենը** | | | | **14427.419** |
| | **Սարքավորումներ** | | | | **423.360** |
| | Աղբաման | հատ | 9 | 28.224 | 254.016 |
| | Նստարան | հատ | 8 | 14.112 | 112.896 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մետաղական նստարան փայտե նստատեղով | հատ | 2 | 28.224 | 56.448 |
| | ԱԱՀ | 20% | | | 2970.156 |
| | Ընդամենը | | | | 17820.935 |

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կապալառու**
«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ
ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
«14» մայիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1>> գնման պայմանագրի

**ՆԿԱՐԱԳԻՐ**
սարքերի և սարքավորումների

| Չափաբաժնի համար | Առաջարկվող սարքերի և սարքավորումների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագրերը | երաշխիքային ժամկետները |
| 1 | Նստարան | - | - | «Շինհայ-ՊՈ» ՍՊԸ | Նախագծին համապատասխան | 1 տարի |
| | Աղբաման | - | - | «Շինհայ-ՊՈ» ՍՊԸ | Նախագծին համապատասխան | 1 տարի |
| | Մարզասարք | - | - | «Շինհայ-ՊՈ» ՍՊԸ | Նախագծին համապատասխան | 1 տարի |
| | Մանկական խաղ | - | - | «Շինհայ-ՊՈ» ՍՊԸ | Նախագծին համապատասխան | 1 տարի |
| | | | | | | |
| 2 | Աղբաման | - | - | «Շինհայ-ՊՈ» ՍՊԸ | Նախագծին համապատասխան | 1 տարի |
| | Նստարան | - | - | «Շինհայ-ՊՈ» ՍՊԸ | Նախագծին համապատասխան | 1 տարի |
| | Մետաղական նստարան փայտե նստատեղով | - | - | «Շինհայ-ՊՈ» ՍՊԸ | Նախագծին համապատասխան | 1 տարի |

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կապալառու**
«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ
ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ----------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 14 » մայիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1>> գնման պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## *Դավթաշեն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման*

### ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Դավիթաշենք վարչական շրջան 4-րդ թաղամասի h. 15 բակի բարեկարգում | ***Պայմանագիրը ուժի մեջ մտնել ու օրվանից*** | ***31.08.2020թ*** |
| 2 | Դավիթաշեն վարչական շրջան Դավիթաշեն գյուղ 4-րդ փողոցի վերջնամասի բարեկարգում | ***Պայմանագիրը ուժի մեջ մտնել ու օրվանից*** | ***31.08.2020թ*** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կապալառու**
«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ
ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիլյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 3*
*«14» մայիսի 2020 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | 45611300 | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | Դավիթաշենք վարչական հ. 15 բակի բարեկարգու | ---- | ---- | --- | ---- | 11 989 611 | 11 989 611 | 19 982 685 | 19 982 685 | 19 982 685 | 20 946 510 | 20 946 510 | 20 946 510 | 20 946 510 |
| | | Դավիթաշեն վարչական շրջան Դավիթաշեն գյուղ 4-րդ փողոցի վերջնամասի բարեկարգում | ---- | ---- | --- | ---- | 10 230 192 | 10 230 192 | 17 050 320 | 17 050 320 | 17 050 320 | 17 820 935 | 17 820 935 | 17 820 935 | 17 820 935 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ---------------------------
(ստորագրությունը)
Կ.Տ

**Կապալառու**
«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ
ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ---------------------------
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 14 » մայիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1>> գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________ | հհ ____________ |
| հվհհ ____________ | հվհհ ____________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*« 14 » մայիսի 2020 թ. կնքված*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1>> գնման պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________ -ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ____________________________-ին կնքված N ____________ _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԿԻԵՎՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ "КИЕВЯН"
"ARMBUSINESSBANK" CJSC
"KIEVYAN" BRANCH

N 2983-12

«14» 05 2020

# ԵՐԱՇԽԻՔ
## (որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1 ծածկագրով կազմակերպված կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ՇԻՆՀԱՅ-ՊՈ» ՍՊԸ-ի** (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ** -ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 38,767,445 (երեսունութ միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր քառասունհինգ) (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015000046** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1 ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30 հոկտեմբերի 2020 թվականը:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Կիևյան» մասնաճյուղի կառավարիչ Մ.Նահապետյան

ՀՍԴԳ բաժնի պետ Մ.Գրիգորյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կիևյան 11Ա/64; Հեռախոս՝ (+37460) 37 25 13; Էլ.փոստ՝ kievyan@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Киевян 11А/64, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 13;

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԿԻԵՎՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ "КИЕВЯН"
"ARMBUSINESSBANK" CJSC
"KIEVYAN" BRANCH

N 2981-13
«14» 05 2020

**ԵՐԱՇԽԻՔ**
**(պայմանագրի ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ՇԻՆՀԱՅ-ՊՈ» ՍՊԸ-ի** միջև կնքվելիք N ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2. Երաշխիքով **«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ** -ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 3,876,745 (երեք միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր քառասունհինգ) ՀՀ Դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015000046** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև մինչև 01 նոյեմբերի 2021 թվականը:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/72-1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Կիևյան» մասնաճյուղի կառավարիչ Մ.Նախապետյան

ՀՍԴԳ բաժնի պետ Մ.Գրիգորյան